ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀԱՆ-ԷԱՃԱՊՁԲ-Պ-23/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 23.12.2022թ. ժամը 12-00-ին, ՀՀ արդարադատության նախարարության վարչական շենքում, ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գագիկ Իգիթյանը,
գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Գարեգին Ղարիբյանը, Արթուր Հայրապետյանը,
քարտուղար՝ Մարինե Մուրադյանը:

1. Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ

«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի, «Ստարտկոպի» ՍՊԸ-ի, «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի, «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի, «Սմարթլայն» ՍՊԸ-ի, «Մովսեսյան» ՍՊԸ-ի և «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, որի հիման վրա որոշեց՝

1. Հակադարձ աճուրդի արդյունքում ընթացակարգի՝
   1, 5, 7, 8, 9, 10 չափաբաժինների մասով «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին,
   4 չափաբաժնի մասով «Ստարտկոպի» ՍՊԸ-ի,
   2, 6 չափաբաժինների մասով «Ալֆա-Էտալոն» ՍՊԸ-ին,
   11-16, 18, 20-24, 27 չափաբաժինների մասով «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին,
   17, 19, 26, 29-31, 35-36 չափաբաժինների մասով «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին,
   25, 28 չափաբաժինների մասով «Սմարթլայն» ՍՊԸ-ին,
   33, 34 չափաբաժինների մասով «Մովսեսյան» ՍՊԸ-ին,
   հայտերը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակիցներ:
2. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն ընթացակարգի 3 և 32 չափաբաժինները հայտարարել չկայացած:
3. ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
4. Անգործության ժամկետի ավարտից հետո 4-րդ աշխատանքային օրը ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գագիկ Իգիթյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Գարեգին Ղարիբյան

_____ Արթուր Հայրապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մարինե Մուրադյան